

Յակոբայ, բազում բանք են առ մատենագիրս, զի Կղիմէն-դոս եւ Հեգեսիօսլոս առ Եւսեբեայ, ասեն թէ՝ թաղեցին զնա 'ի տեղւոյն առ կողմն տաճարին, եւ մինչեւ ցայսօր ժամանակի շիրիմ նորա կայ անդ. եւ թէ թաղեցաւ նա ուր կատարեցաւ մերձ 'ի տաճարն, եւ անդ գոյր յիշատակ դերեզմանի նորա նաեւ յետ աւերածոյ տաճարին: Իսկ մերս Սարգիս շնորհալի յաւարտ մեկնութեան թղթոյ արդարոյն ասէ. յորում շերմի թագաւորն եգաւ, մօտ 'ի տեղին յայն եւ սպասաւորն թաղեցաւ: Յաւելուն եւ այլք թէ՝ նա ինքն Յակոբ շինեալ էր իւր դերեզման 'ի լեառն Զիթենեաց, եւ անդ ամկոփեալ էր զոսկերս սրբոյն Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի, եւ Ս. Սիմէոնի ծերունւոյն. եւ թէ ընդ նոսին եգան զկնի եւ ոսկերք իւր, եւ թէ գոյ յիշատակութիւն Յայսմաւուրս Արաքացւոց եւ Եգիպտացւոց տօն փոխադրութեան մարմնոյ սրբոցս 'ի սկզբան Դեկտեմբեր ամսոյ: Բերէ եւ Լեւոն Ալլատիոս 'ի Պատմութեանց Երուսաղէմի. թէ ոչ կարի հեռի է 'ի ձորոյն Յովսափաթու վանք սրբոյն Յակոբայ Աստուած եղբօր բնակեալ 'ի Հայոց, եւ այլ ոմն թէ դերեզման նորուն Յակոբայ տեառն եղբօր, էր առ ժամանակօք խաչակիր զօրաց ուխտատեղի 'ի վերայ ճանապարհին, որ տանէր 'ի ձորն Յովսափաթու եւ 'ի դերեզման Աստուածամօր կուսին. բայց որպէս դերեզման տիրամօրն էր թափուր, նոյնպէս եւ դերեզման Յակոբայ համարեալ էր իրր դատարկեալ, քանզի ասի թէ, Կայսրն Յուստինոս Թրակացի եւ թագուհին Սոփիա փոխադրեալ իցեն յերուսաղէմէ 'ի Կոստանդնուպօլիս զնշխարս Յակոբայ, Զաքարիայ եւ Սիմէոնի, եւ եղեալ 'ի տաճարն կանգնեալ յինքեանց յանուն նորին Տեառն եղբօր: Իսկ ազգային աւանդութեամբ զոր ունիմք մինչեւ ցայսօր, զտեղի նահատակութեան արդարոյն Յակոբայ ցուցանեն 'ի ձորն Յովսափաթու մերձ յարձանն Արիսողոմայ 'ի ներքոյ կամրջի, որոյ յարեւելեան կողմն է ջրհորն մեծ, եւ տեղի դերեզմանի նորին 'ի հարաւ կոյս արձանէն Արիսողոմայ փորեալ 'ի ժայռին, որոյ պատուհանքն երեւին ցարդ, եւ 'ի վերայ սորա կառուցեալ էր վանք յանուն սրբոյն Յակոբայ բնակեալ 'ի միաբանացն Հայոց, որպէս գրեցաք, եւ 'ի միջոյ եկեղեցւոյն աստիճանաւ իջանէր 'ի դերեզման սրբոյն: Գոյ զայս-